



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, [www.ysu.am](http://www.ysu.am)

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°4

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ 25.03.2016 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ

### Օրակարգ

1. ԻԿՄ ֆակուլտետի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում:
2. 2014-2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքների քննարկում
3. Մրցույթ:
4. Ընթացիկ հարցեր:

### 1-ին հարցի վերաբերյալ

**Լսեցին՝** Դեկան Վ. Դումանյանը ներկայացրեց 2016-2020թթ. ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիրը: Համաձայն ռազմավարական ծրագրի ֆակուլտետը պետք է իրականացնի կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջների հանահունչ: Այդ նպատակով պետք է մշակվի և իրականացվի ուսանողական պրակտիկայի բարելավմանը նպատակաուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հանագործակցելով ՏՏ ոլորտի ընկերությունների հետ: Ֆակուլտետի ՌԾ-ում կարևորվում է ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմների մշակումն ու

ներդրումը, այդ գործում զգալի բարձրացնելով ֆակուլտետի ամբիոնների պատասխանատվությունը: ՌԾ-ում կարևոր ուղղություն է տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը կրթական գործընթացում: Այդ նպատակով պետք է վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար: Վ. Դումանյանը նշեց, որ արդիական հետազոտությունների ոլորտում կարևոր է ֆակուլտետում խթանել կիրառական բնույթի հետազոտումների իրականացումը, այդ աշխատանքներում մեծապես ներգրավել ասպիրանտներին և մագիստրանտներին: ՌԾ-ում կարևոր ուղղություն է հասարակայնության հետ կապերի հետագա ընդլայնումը: Նախատեսված է ստեղծել ֆակուլտետի շրջանավարտների տվյալների բազա՝ էլեկտրոնային հաղորդակցության հնարավորություններով, նպաստելով շրջանավարտների հետ գործնական կապերի հաստատմանը: Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար պետք է կազմակերպել ճանաչողական այցեր ֆակուլտետ, դպրոցականների համար անցկացնել ամենամյա օլիմպիադա «Ինֆորմատիկա» առարկայից:

**Որոշեցին՝** Հաստատել ԻԿՄ ֆակուլտետի 2016-2020թթ. Զարգացման Ռազմավարական Ծրագիրը:

2-րդ հարցի վերաբերյալ

**Լսեցին՝** Դեկանի տեղակալ Է. Դանոյանը նիստի մասնակիցներին ներկայացրեց այն հիմնական առաջարկների հետ, որոնք առկա են հարցաթերթիկներում:

- Ուսանողներին տրվի «Dream Spark» ծրագրից օգտվելու հնարավորություն:
- Ավելի շատ ժամաքանակ հատկացվի գործնական պարապմունքներին:
- Wi-Fi հասանելի դարձնել ֆակուլտետի ողջ տարածքում:
- Կուրսատորները ավելի ակտիվ աշխատեն իրենց կցված խմբերի հետ:
- Ավելի մեծ ուշադրություն ծառայած, մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների նկատմամբ:
- Ավելի մեծ ուշադրություն հատկացնել պրակտիկային, այդ նպատակով կնքել պայմանագրեր SS ոլորտի կազմակերպությունների հետ:

- «Կոմբինատոր ալգորիթմներ» առարկան չունի գործնական դասաժամեր, ինչը դժվարացնում է դասընթացի յուրացումը:
- Բոլոր համակարգչային լսարանները ապահովել պրոյեկտորներով:
- Վերանորոգել ԻԿՄ ֆակուլտետի մասնաշենքը:
- Առավել խստությամբ հետևել ուսանողներին ընթացիկ քննությունների անցկացման ժամանակ՝ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:
- Արտալսարանային տարբեր միջոցառումների մասին տեղեկատվության ավելի հասանելի դարձնել ուսանողության համար:
- Գրադարանում ապահովել որոշ խիստ անհրաժեշտ դասագրքերի բավարար քանակություն:

**Որոշեցին՝** Ուսանողական առաջարկները ընդունել ի գիտություն:

3-րդ հարցի վերաբերյալ

**Լսեցին՝** Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնի համար հայտարարված մրցույթին ֆ.մ.գ.թ. Սեյրան Ստեփանյանի մասնակցելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Ս. Ստեփանյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

**Արտահայտվեցին՝** Դեկանի տեղակալներ Գ. Ասլամազյանը, Է. Դանոյանը, դոցենտ Ժ. Ավետիսյանը պաշտպանեցին Ս. Ստեփանյանի թեկնածությունը:

**Որոշեցին՝** Ս. Ստեփանյանին ընդգրկել փակ, գաղտնի քվեարկության ցուցակում:  
Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Սահակյան Սահակ - նախագահ
2. Առաքելյան Արա - անդամ
3. Վարդերեսյան Հովհաննես - անդամ

Ֆակուլտետի գիտական խորհրդի 25 անդամներից ներկա էին 21 -ը:

Քվեարկվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի թեկնածությունը:

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 21 անդամներ:

Բաժանվել է 21 քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 21 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են.

Ազգանուն անուն	կողմ	դեմ	անվավեր
Ստեփանյան Սեյրան	20	0	1

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ 1 :

**Որոշեցին՝** Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և Ս. Ստեփանյանին համարել ընտրված թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնում:

#### 4-րդ հարցի վերաբերյալ

**ԼՍԵՑԻՆ՝** «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա» ամբիոնի ասիստենտ Պետրոս Աշոտի Պետրոսյանին դոցենտի կոչում շնորհելու հարցը:

**Որոշեցին՝** Երաշխավորել Պետրոս Աշոտի Պետրոսյանին՝ շնորհելու դոցենտի գիտական կոչում:

**ԼՍԵՑԻՆ՝** «Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում» ամբիոնի ասիստենտ Սահակ Լևոնի Սահակյանին դոցենտի կոչում շնորհելու հարցը:

**Որոշեցին՝** Երաշխավորել Սահակ Լևոնի Սահակյանին՝ շնորհելու դոցենտի գիտական կոչում:

Գիտական խորհրդի նախագահ  
Գիտական խորհրդի քարտուղար

Վ. Դումանյան  
Է. Դանոյան